ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ

0051 .ք.Երևան, Կոմիտասի 54 Բ, հեռ.012351035
էլ.հասցե՝ qrbujpoak1@gmail.com

N Ն-2299

«06» «09» 2024թ.

«ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ ՏՆՕՐԵՆ Ե. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(թիվ «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-6, «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-4» ծածկագրով պայմանագրերը միակողմանի լուծելու մասին)

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ն /այսուհետ նաև՝ Պատվիրատու կամ Գնորդ/ դեղերի, քիմիական նյութերի և բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով 14.11.2024 թվականին հայտարարել է «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2» և 16.11.2024 թվականին «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3» ծածկագրերով գնման ընթացակարգեր (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգերի արդյունքում Պատվիրատուի և «Էսզեթ Ֆարմ» ՍՊԸ-ի /այսուհետ նաև Ընկերություն կամ Վաճառող/ միջև 22.12.2023 թվականին կնքվել է «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-6» և 28.12.2023 թվականին կնքվել է «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-4» պայմանագրերը/ այսուհետ նաև՝ Պայմանգիր/: 19.08.24 թվականի դրությամբ Պայմանագրերը մասնակի կատարված են և չկատարված մասը կազմում է 1 076 500 (Մեկ միլիոն յոթանասունվեց հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ և 450 000 (Չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Պատվիրատուն 19.08.2024 թվականին Առողջապահության նախարարությունից ստացել է ՎԳ/06.3/24450-2024 գրությունը,որին կից ներկայացվել է նաև ՀՀ Ֆինանսների նախարարության 03/26/17361-2024 գրությունը, ՀՀ պետական վերահսկողության ծառայության Ե/801-23 գրությունն ու այլ փաստաթղթեր: Համաձայն ներկայացված փաստաթղթերի տեղեկատվության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառված «Էսզեթ Ֆարմա» ՍՊԸ-ին (ներառված 06/05/2023թ. մինչև 20/06/2025թ. գնումների գործընթացին մասնակցելու իրավունք մասնակիցների ցուցակում) գնումների մասին ՀՀ օրենսդրության իմաստով փոխկապացված են «Էսզեթ Ֆարմ» և «Աննարկա» ՍՊԸ-ները:

ՀՀ կառավարության 04/05/2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի՝

- 121-րդ կետի համաձայն՝ մասնակցի «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելը, դրանում գտնվելու ժամանակահատվածում, ինքնաբերաբար հանգեցնում է վերջինիս հետ փոխկապակցված անձանց գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակման:
- 32-րդ կետի 1-ին մասի «բ» պարբերության համաձայն մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր և իրեն փոխկապակցված անձանց համապատասխանության մասին.
-32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումների մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:
-33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրով (նախագծով) սահմանվում է նաև, որ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության

համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով պայմանագրի կողմի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է ՀՀ օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է: Նշված կետով նախատեսված հինքերն ի հայտ գալու դեպքում հսկողություն և (կամ) վերահսկողություն իրականացնող մարմինները, իսկ մյուս դեպքերում պատվիրատուն այդ մասին ծանուցում են իրավապահ մարմիններին՝ վերջիններիս և պայմանգիր կնքած մասնակցին ներկայացնելով հիմքերը:

Կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետով նախատեսված պայմանը ներառված է Պայմանագրի 8,3 կետում:

Ելնելով վերոնշյալ փաստական հանգամանքներից «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ն որոշեց՝ միակողմանի մասնակի (Պայմանագրերի չկատարված մասով) հրաժարվել թիվ «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/2-6» և «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-24/3-4» ծածկագրերով գնման պայմանագրերից՝ համարելով միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով ՝ կիրառել ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված « Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով և Պայմանագրերի 8.11-րդ կետով սահմանված դրույթները:

ՏՆՕՐԵՆ՝ ԿԱՄՈ ՄԱՆՈՒԿՅԱՆ